ղեցիկ վկայական չի կարող լինել, քան այն կարծիքը, թէ այս տեսակ մտքերը «միշտ և հանապազ Հռոմայի ջուրերը խմող գլուխներէն կըղխին»։ Կարող էր ազդէտ լինել եկեղեցական պատմութեան մէջ, բայց զարմանալի է, որ գաղափար չունի մեր ժամանակում կատարուած խռովութիւնների մասին ևս։ Ի՞նչ կասեն մեր յօդուածագրին Հռոմի ճիզուիթները, որոնք յանձին Պիոս Ժ. պապի կատաղի պատերազմ են սկսել կաթոլիկ «մոդեռնիստների» դէմ։—Շնորհաւորում ենք Ձեզ, եղբայր, կասէին, որ Դուք Հայոց եկեղեցու մէջ նոյն դերն էք յանձն առել, ինչ որ մենք կաթոլիկ եկեղեցու մէջ։

Դ. Վ. Յովսէփեան.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ապրիլի 6-ին Մայր Աթոռ ժամանեց Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվատեան, իսկ 4-ին Տ. Բենիկ վարդապետ, որ Բեսարաբիայի թեմի կոնսիստորիայի նախանդամ էր։

Տ. Ներսէս վարդապետ Տ. Միքայէլեան նշանակուած է հիւրընկալ. յուսալ կարող ենք, թէ նորա տեսչութեան տակ Մ. Աթոռի հիւրատանը վերջապէս կարգաւորութիւն և մաքրութիւն կհաստատուի։ Մ. Աթոռի հիւրերն առաջին տպաւորութիւնը հիւրընկալից են ստանում. Նոր հիւրընկալը բարձրագոյն, եւրոպական կրթութիւն ստացած մարդ է և անշուշտ նորա առաջնորդութեամբ հիւրերը քաղցր տպաւորութիւն կտանեն Ս. Էջմիածնից։

Ամենապատիւ Տ. Տեղակալը առաջադրել է Տփխիսի և Երևանի առաջնորդներին Գանձակի և Հ. Նախիջևանի փոխանորդութիւնների համար ընտրութիւններ կատարել։

Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքը հեռագրով յանուն Տ. Տեղակալի յայտնել էր, թէ ծանուցողական հրովարտակները հայրապետական ընտրութեան մասին դեռ չեն ստացուած Պոլսում, ուստի և խնդրում է տեղեկացնել այդ մասին։ Ս. Տեղակալը այդ հեռագիրը յանձնել է Ս. Սինոդին, իսկ վերջինս դիմեց Ներքին Գործոց Տ. Նախարարին փութացնել առաքումը։ Սակայն վերջին օրերս Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են, թէ այդ թղթերն արդէն ստացուած են։

Ապրիլի 26-ին Թիֆլիսում կայացել է բարեշնորհ Մեսրոպը վարդ. Տէր Մովսիսեանի նախագահութեամբ մի ժողով ճարտարապետներից ու նկարիչներից բաղկացած, քննելու Մայր Աթոռի վերանորոգման կարևոր հարցը։ Ժողովը որոշել է գործին աւելի մօտիկ ծանօթանալու համար ընտրել մի մասնաժողով և ուղարկել Էջմիածին քննելու հարցը տեղն ու տեղը և ժողովին մի մանրամասն զեկուցումն—տեղեկութիւն տալու։

Մասնաժողովի անդամ են ընտրուած՝ ճարտարապետ Զոհրաբեան, Բիլֆէլդ, Տէր Սարգսեան, արձանագործ Նիկոլադէ և նկարիչներ՝ Ֆոգել և Թադէոսեան։

Բացի յիշեալներից ժողովին մասնակցել են նաև՝ նկարիչներ—Լոպատինսկիյ, Ֆէթվաջեան, Գրինէվսկիյ, Տօիդէ, Շմերլինգ, Յակովբեանց, ճարտարապետներ—Սարգսեանց, Բաբանեան ևն։

Յիշեալ պարոններից այժմ Մ. Աթոռ են եկել ճարտարապետներ Զոհրաբեան, Տ. Միքայէլեան, Տ. Սարգսեան և նկարիչներ պ. պ. Թադէոսեան և Ֆոգել ուսումնասիրելու տաճարի դրութիւնը և արձանագործ Նիկոլադէ։

Մարտի 25 Թիֆլիզում չքեղ կերպով տօնուեցաւ Նորին կայսերական Մեծութեան Տ. Փոխարքայի սպայութեան յիսունամեակը։ Մ. Աթոռի կողմից պատուիրակներ էին գնացել շնորհաւորելու Տ. Տ. Յուսիկ Աքեպիսկոպոս և Մեսրոպ վարդապետ, որոնք ներկայացրին մի ուղերձ զարդարուած նկարիչ Ե. Թադէոսեանի կողմից հայոց

մանրանկարչութեան սճով և դրուած Էջմիածնի պատկերը կրող կազմի մէջ։ Ահա այդ ուղերձի աշխարհաբար թարգմանութիւնը։

ՁԵՐԴ ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ

ԿՈՄՍ ԻԼԼԱՐԻՈՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Քանի որ հանդիսաւոր տօնում է յիսուն ամեակը պետութեան մատուցած Ձեր փառաւոր ծառայութեան, Սուրբ Էջմիածին նախաթոռ վանքը իւր ամբողջ հօտի հետ միացնում է իւր համեստ ձայնը այն բազմաթիւ շնորհաւորութիւններին, որով դիմում են Ձերդ Պայծառափայլութեան երկրի բոլոր այլասեռ բնակիչները։

Իբրև բազմաչարչար հայ ժողովրդի սրտագին մտածմանց և ջերմեռանդ խորհուրդների վայր, Հայոց հին առաքելական եկեղեցին անկեղծ երախտեամբ յիշում է Ձեր այն խորաթափանց սրատեսութիւնը, որով Դուք սկսելով երկրի կառավարութիւնը, որ Ձեզ էր հաւատացել մեր սիրեցեալ ԿԱՅՍՐԸ,— ճանաչեցիք նրա հօտի նկատմամբ ճշմարտութիւնը։ Եւ, իմանալով այդ ճշմարտութիւնը, հաստատամիտ վճռականութեամբ, դարձրիք Հայաստանի Լուսաւորիչ Սուրբ Գրիգորի եկեղեցուն նրա պատմական սեպհականութիւնը և նրա հետ միասին, որ աւելի թանգ է՝ ռուսական Պետութեան աւանդական վստահութիւնը։ Եւ այն ժամանակ եկեղեցու սեղաններից լսուեցին շնորհակալութեան սքանչելի աղօթքներ նրա դարաւոր հովանաւոր աղգի մեծութեան և փառքի համար։ բացուեցին հայ ժողովրդական սրբացեալ դպրոցների դռները հայկական մատաղ սերնդին մարդկութեան քաղաքակրթութեան բարիքներին մասնակից անելու համար։ Վերջապէս նոր ի նորոյ բացուեց հայ սիրտը իւր մեծ հայրենիքին անձնուիրական ծառայութիւններ մատուցանելու համար։

Ուստի հայ եկեղեցին չի մոռանալ Ձեր բարձր անձնանուիրութիւնը և շրջապատելով Ձեր անունը աղգութեան և մարդասիրութեան պայծառ փայլով իւր ապագայ սերունդներին կը հաղորդի։ Իսկ ի յաւերժացումն այդ հանդիսաւոր օրուայ ես, խոնարհ ծառայ Քրիստոսի եկեղեցւոյ, իբրև թոյլ հաւատիք անձնուէր զգացմունքների,—որոշելով հիմնել մի թոշակ Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանում, այսմ մեր հի նմենաս-

տանի բոլոր միաբանութեան հետ միասին առ Բարձրեալն եմ վերառաքում ջերմ աղօթքներ, թող Աստուած ուղարկի երկնային օրհնութիւնը Ձեզ, Ձեր մարդասէր ամուսին Ելիզաւետա Անդրէեվնային և Ձեր ամբողջ փառաւոր ցեղին, ամէն։

Ձերում Պայծառափայլութեան խոնարհ աղօթարար,
Տեղապահ Կաթուղիկոսի ամենայն Հայոց **Դէորգ**
Արքեպիսկոպոս Սուրէնեանց

1908 թ. 18-ն Մարտի
Ս. Էջմիածին

Բացի սորանից Տ. Տեղակալը հեռագրով ևս շնորհաւորեց բարձրաստիճան յոբելեարին.

Նորին Պայծառափայլութեան Կովկասի Փոխարքայ կոմս Իլլարիոն Իվանովիչ Վարանցով-Դաշկովին.

Գահին և հայրենիքին մատուցած Ձեր կենսադարեան փառաւոր ծառայութեան հանդիսաւոր յոբելեանի օրը ես Էջմիածնի վանքի միաբանութեան, Ձեզ երախտապարտ Հայոց եկեղեցու ամբողջ հոգևորականութեան և հօտի հետ խորին յարգանքս մատուցանում եմ Ձեր Պայծառափայլութեան սրտագին շնորհաւորութիւնները։ Ամբողջ վանական միաբանութիւնը Հայաստանի մեծ լուսաւորիչ Ս. Գրիգորի ձեռքով կառուցած Էջմիածնի տաճարում ջերմ աղօթներ է առաքում Բարձրեալին շնորհելու Ձեզ դարձեալ երկար կեանք որպէս Ռուսաց պետութեան պատմական աւանդութիւնների և բարձր մարդասէր հոգու փառաւոր Ներկայացուցչի։ Բազմաթիւ յարգողների այս ընդհանուր տօնակատարութիւնը Ձեր պայծառափայլութեան պատմութեան լուսաւոր էջն է կազմում որպէս ընդարձակ Կովկասի մարդասէր, խմաստուն և տաղանդաւոր կառավարչի։ Ի յաւերժացումն այս նշանաւոր օրուայ ամբողջ միաբանութեան ցանկութեան համաձայն որոշուած է մի թոշակաւոր հիմնել Ձեր անուան Էջմիածնի հոգևոր ճեմարանում։ Էջմիածնի Մայր Աթոռի կողմից ողջունելու և Ձեր Պայծառափայլութեան ուղերձ մատուցանելու համար ուղարկուած են իմ կողմից Ցուսիկ Արքեպիսկոպոսը և մագիստրոս Մեսրոպ վարդապետ Տ. Մովսեսեանց։

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղապահ
ԴԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԷՆԵԱՆՑ

25 Մարտի 1908.

Մարտի 28-ին Տ. Փոխարքայից ստացուեց հետեւեալ հեռագիրը

Կաթուղիկոսական Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանցին

Շնորհակալ եմ Ձեր Բարձր Սրբազնութիւնից և խնդրում եմ հաղորդել իմ շնորհակալութիւնը վանքի միաբանութեան, հոգևորականութեան և ամբողջ հօտին աղօթքների, շնորհաւորութիւնների և արտայայտուած զգացմանց համար, որ թանգ են ինձ համար:

Կոմս Վարանցով-Դաշկով

28 Մարտի 1908.

Զատկի մեծ տօնի առթիւ Ն. Ամենապատուութիւն Տ. Տեղակալը հեռագրով իւր և միաբանութեան կողմից շնորհաւորեց Կովկասի Տ. Փոխարքային և նորա ամուսին Կոմսուհի Ելիզաւետա Անդրէեվնային և փոխադարձաբար շնորհակալութեան հեռագիր ստացաւ նրանցից։

Մեծ Պասի վերջին շաբաթը Մ. Աթոռում հիւր էր գերմանացի հայասէրների խմբին պատկանող պաստոր Շտիր։ Նա եկել է ան՝ամբ ծանօթանալու հայ ժողովրդի և նորա եկեղեցու հետ։ Յարգելի պաստորը այն անձնաւորութիւններից մէկն է, որ կ՝կամենար հայ ժողովրդին և եկեղեցուն օգտակար լինել, բայց առանց միսիոներական նպատակների։